

ԱԶԳԱՅԻՆ ՆՇԽԱՐ (1)

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԴԱՇՏԵՑԻՈՑ

ՈՏՔ ՇԱՐԱԴՐԵԱԼ Ի ՎԵՐԱՅ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԻՐԱՅ



Տղէզ զրկէ աղուներ (2)

Մեր հացրն շատ աղ ունի .

Լէր խորադէտ օձի պէս ,

Միամիտ զինչ աղուներ (3) :

Այս աղալոյ արկան է

Կընդըն չէ , արկան (4) է .

Զուր (5) յե՞րբ անխիղճ մտքերով

Զիս ցաւէ ցաւ արկանէ :

Ոջայն ցաւօք պարկած է ,

Ժանկն կ'առնու պարկ պարկ կ'ածէ ,

Սէր կ'անէ խեռ (6) մեծ իշին ,

Զեռնէն բռնել պար կ'ածէ :

Քամին փրչել կարկրտան (7) ,

Հին շորիս նոր կարկրտան .

Յետին օրէն հազուստիս

Նստել լալով կար կր տան :

Ընկել էր մարդի շարէն ,

Զիմացաւ մարդ իշալիէն (8) .

Փրկէ՛ս աղուհացակեր

Հացրնկեր մարդու շառէն (9) :

Այտք քո դերիս արին ոտ (10) ,

Մարտում (11) կ'եղնի արին ոտ (12) .

Մի՛ միսեր ըզուր քո սիրտ իմ ,

Արնէս կ'եղնիս արիւնտ (13) :

Շիտկեմ քեզ երկու մաշի , (14)

Հանդերձդ լաւ էր կումաշի . (15)

Ստեփանն ուր գընդ կու սիւէ

Կ'ասեն թէ է՞ր կու մաշի :

Առող մաղեր , յառող զիս , (16) .

Արտասուեմ որ առողիս , (17)

Քանի՛ արիւն լացցընես ,

Մէկ հետ (18) արի ա՛ս հողիս :

Մի անհատ եմ կամ եղէն (19) ,

Կամ առիւծէն կամ եղէն .

Ոչ ոք չստէ՛ Մեղ շունիմ ,

Ինչ մեղք ունիմք՝ կայ մեղէն (20) :

Կինն առեր է թողեր ի՛նչ (21) ,

Կըրակըզ զիս թող էրէ (22) .

Սրտէս արիւն կու թափի

Քանի ձեռաց թողեր է :

Քանի՛ քաշես ինծի տուր (23) ,

Պըռկէդ նըշան ինծի տուր .

Յետոյ զգերիս թէ կամիս

Առիւծոյ եւ ինծի տուր (24) :

Բախան որ ցողէ , դետ ի՛նչ է ,

Ոջքս աղերին դետին (21) չէ .

Երկնքումն ինչ եւ պարծի ,

Էն երկինք այ (26) դետին չէ :

Եմ մի մըսէ մի արնէ (27) ,

Մի կրնոյ՞ մի առնէ (28) .

Լինեմք մի հօտ մի հովիւ ,

Եթէ Աստուած մի առնէ (29) :

Վեւին առջեւն ի՞նչ կայ — Սէ ,

Ինչ կալ զընէ ինչ կասէ (30) .

Տեղիս սըտասաց մարդըն

Դատաստանումն ի՞նչ կ'ասէ :

Աղքատին հացն էր (31) կուտան,
Ծոյլ մարդուն վարձ է՞ր կուտան.
Աստուած շանէ որ մէկ կին
Ոտրն դրնէ երկու տան:

Ասողջն այ (32) քաղցր, դառն այ ցաւ,
Սիրտս այս ցաւէս դառնացաւ.
Երկու այսպէս դառնութիւն
Երբ մինտեղուի (33), դառնայ ցաւ:

Ո՛րչառ լաւ ժիր կաց, լաւ արի,
Առ իս լաւ երթ, լաւ արի.
Բարւոյն բնդդէմ շատ մեղաց,
Հէնց իմացայ լաւարի (34):

Տիւնին կրպած լաւ կայ ըէ,
Պատանակարդ լաւ կարէ՛,
Բարւոյն կ'առէ՛ ոչ գիտեմ,
Բայց չարութիւն լաւ կարէ (35):

Թէ առեւծ չէ, ինձ է նա,
Օտարի չէ, ինձ է նա.
Բոլոր գիշերն կու նայիմ,
Խղճա՛մ դերույս, ինձ ձէնա՛ (36):

Տեսի՞ր դրացիդդ ի՞նչ չար են, (37)
Խեւ (38) էս գերոյս ի՞նչ աշին.
Գանդատախառն արտասուքս,
Կ'իջնու աչքէս ինչ արին (39):

Մատաղ կ'եղնիմ ես գիտնուն
Վասն զի դուն ես գիտուն,
Ծիծաղելով գիր (40) դէմս,
Երբ որ դրսէն ես գիտուն:

Վատ խօսքին դինն ի՞նչ կուտան,
Ուր ահ ոչ է՝ ի՞նչ քուզան,
Ձտիւ եւ զգիշեր կրակումդ
Կու խորովիմ, ի՞նչ կուտան (41):

Լոյսն դունոց որակն էր,
Ո՛ր աղբիւնն էր, ո՞ր ակն էր.
Խեթիւ կ'ասեն նայեց քեզ,
Այն խաւարած ո՞ր ակն էր:

Կ'ասի՛ր՝ (42) Հացէս չըկերար,
Երկինքն ի թուխզ կարկուտի,
Անձն իմ չապկիս կար կուտի,
Եթէ առջեւ կար, կ'ուտի (43):

Ձեր ծուռ խօսքդդ ի՞նչ կ'ասեմ,
Ուր ոչ զոյ դուռն՝ ի՞նչ կայ սեմ,
Ամառն էանց կալ շուշիմ,
Ձմրան օրումն ինչ կ'ասեմ (44):

Ստեփանն հօրէ մինակն է,
Չարկամդ եղնի մին ակնէ (45).
Սիրելիս երբ կու ճօճայ,
Գերիս գրնոջ մին ակն է:

Նա դուսինն է, սա տանին, (46)
Ըղնա թողնին սա տանին.
Լեզուն ուրիշ, սիրտն ուրիշ,
Աչակերտ է Սատանին:

Մեր հանդերումն (47) շատ կայ ցին (48),
Վատին զխոյն շատ կացին (49).
Չարքն աշխարհումս օր մ'ասորին,
Կ'ասեմ՝ ախսո՛ւս, շատ կացին:

Երես ով է, խոր ով է.
Մեր ջրերըն խորով է (50).
Իւր մեղքն այլոց բանապատղն՝
Որ տեղ տեսնուս, խորովէ՛:

Մին դոհար այ, մին ակն այ,
Երբեմն ինձի մին ակնա՛.
ԸՍտեփանին օր 'ւ աքեն
Մինակ նայ այ, մինակ նայ:

Սիրելիս սիրուն առն է,
Սիրուն տուր սիրուն առն է՝.
Աչքս դէշին չը տեսնու,
Թող հոգիս սիրունն առնէ:

Սիրուն ժամ սիրուն պահ է, (51)
Ջեզդ նորա սիրուն պահ է.
Գէշին երեսն է կշկուտ,
Թէ գիտես՝ սիրուն պահ է:

Շուռ դամ սիրուն ընկերի,
Սաւանն սիրունին կ'երի (52).
Գէշին պարոն շեմ եղնիր,
Կ'եղնիմ սիրունին գերի:

Ստեփան, ե՛լ, սիրունն էլաւ,
Շունչս անոր սիրուն էլաւ.
Գէշ կատուն ի՞նչ կու պահես,
Ինչ պահես՝ սիրունն է լաւ:

Սիրունն է միշտ սրտի սէր,
Սիրով կուտայր սրտի սէր.
Լեզուս ասաց միշտ անկեղծ
Ինչ որ մէջ իմ սրտիս էր:

Ի՞նչ ակուի (53) ինչ դաղ (54) այ,
Երբ կուտ չունիմ, ի՞նչ դաջ աղայ (55).
Երբ Աստուած է սրտագէտ,
Ստեփանն մարդէ ինչ քաղայ (56):

Մանող ամ բարակաման,
Հաստ խելքի բարակ աման.
Դու քեզ բարակամ (57) դարձիր,
Չասես ողջ բարակամ ան (58):

Հաւքն իջնուն գէշին համար,
Էս չըտամ գէշին համար (59).
Ձըլնէր սիրունին սաւան,
Հայելին գէշին համար:

Ծառքն կ'ածի, շունչ չունի,
Ծառ չօպան կայ շուն շունի,
Ով երկու տակ (60) կու խօսի,
Նա հոգի չէ, շունչ ունի:

Բեռն ունիս ջուլու խակէն (61),
Ե՛կ ջոկէ՛ ջուլը խակէն (62),
Լաւն ընկաւ, վառքն կանգնաւ,
Էս գեղիս ջուլը խակէն (63):

Անուշ քողոյ անուշ չար այ (64),
Նիստ ակունքոյ անուշ չարայ.
Նղբող արիւն կու սիրես,
Մէկ դաս տամ՝ անուշ արա՛:

Մէկ մտացս՝ մէկ կամիս (65),
Մարդ փորձելն է մէկ ամիս.
Էն դիս խաբեց որ կ'սեղ՞ր՝
Մէկ ոսկի ենք մեղ, մէկ այ միս (66):

Սեւքն լաւ է տան դեղնի (67),
Լաւ կինըք քո տան դեղն թ (68).
Աստուած շանէ թշնամիդ
Սիրելւոյ պէս տանդ եղնի:

Քո սիրաբղ միշտ առ իս էր,
Թեք (69) կու հայիս առ իս է՞ր.
Ինչ նախանձ կէր՝ ծախեցի,
Հոգւոյս բաժինն առի սէր:

Էս մեր պապենց իգին (70) է,
Գլխիս ցաւն է ի գինէ (71).
Մեղքն որ դրախտէն մեղ հանեց,
Արուին հօ չէ, իգին է (72):

Քեզ կու դտնաս աղէկ կին,
Եւ կամ աղէկն աղէկին.
Սողոմայ մեղքն արաւ
Ղովտայ կինըն աղէ կին:

Մին վերին է, մին տակին,
Աշխարհս ոչ է մի՛նտակին (73).
Աստուած չըտայ երկու կին,
Թէ տալից այ (74) մին տայ կին:

Ով մեղ չարաւ, մարդ այն է,
Մարեամբն չէ, Մարթայն է.
Աստուած շանէ որ մէկ կին
Երեք կամ չորք մարդ անէ (75):

Կամ Շամիրամ կամ Արա,
Կամ ուսուցի՛ կամ արա՛.
Աղնիւ կերպիդ լոյսըն միշտ
Տիւ եւ դիշեր կամար այ:

Մինչ դու գլորիս, լայ վերին,
Երէցն ուտէ լաւ երին.
Վատով աշխարհս լցուաւ,
Տեղ (76) չըմըաց լաւերին:

Շալ հագալ կապի տակէն (77),
 Թէ պրծայ (78) կապի տակէն.
 Փրկես քօռէն քաշալէն,
 Կաղէն եւ կապիտ աղէն (79):

Տէ՛ր, դիւ շրտաս անկողին,
 Ոչ չար վարք իմ աջն հողին (80).
 Չրտաս լաւին հին ըզդեստ,
 Եւ ոչ չարին անկողին (81):

Հայրբա կուգալ ի շինէ (82),
 Ո՛ն աւերէ ի շինէ՛ (82).
 Լաւին հարկիք չըմբնաց,
 Ինչ հարկիք կայ՝ իշին է:

Երեխին աշքն էր կաթին,
 Ոսկիդ մի՛ տար երկաթին.
 Օր եւ դիշեր արտառուջս
 Չդիտեմ աշքն է՛ր կաթին:

Ուրիշ ես եմ, ուրիշ էն.
 Շէնէս գրեամ ուրիշ շէն-
 Իմ ձեռնէս ունիմ գանդատ,
 Ի՛նչ գանդատիմ ուրիշէն:

Կուլեմ շինեմ ուրիշ չէն,
 Ի՛նչ աղն ունիմ ուրիշէն.

Շատ իշապան չըտեսի
 Գանգատ անէր ուր (83) իշին

Էլ մեղք չըկայ գործելի
 Քան զոր յառաջ գործել ի (84).
 Քորսիւր սրտասաց մարդին
 Երեսին մուգ (85) գործելի (86):

Լեզակ ուժմ լազուտի (87).
 Լաւ նշենէի, լաւ ուտի (88).
 Ով սրտումբն փրքանայ,
 Դուռն էլ փուք տուր, լաւ ուտի:

Էն մեր ջաղցին նաշին (89) այ,
 Բանն էն այ որ նա շինայ (90).
 Ով օտարի լաց կ'ուզէ,
 Հացն վեր իւր նաշին (91)այ:

Էլ շինիր որ էլ դառնայ,
 Սա ոչինչ չէ էլ դառ նայ (92).
 Տէ՛րն ոչ տայ աղքատութիւն,
 Քահ ըզմահըն էլ դառն այ:

Գինին ա՛մ տո՛ւր երկու լի,
 Չընեւլացուն (93) է՛ր կուլի.
 Թէ չարթէն ինձ հաց մի տէր (94),
 Ես այսպէս դառն է՛լ կուլի (95):

Հաւաքեց ՅՈՒՂՆ. ՔՆՆՅ. ՄԻԳԵԱՆ

1. Այս վերնագիրը Մկրեան քահանայ է դրած:
 2. Ապալու: 3. Երկամբար: 4. Էրկամ, այլը
 մարդու: 5. Մինչեւ: 6. Հետ: 7. Կարկուտ-
 անք: 8. Նշմարաւմ: 9. Բուռ բառն լայլու է
 շառն. զոր քուշակեան տաղերուն մէջ ալ կը
 գտնենք՝ չարաբիւն. չարիք իմաստով (Յա-
 ւուրն ի հաղար պահուն Տէր փրկէ ի մարդո՛ւ
 շառն: Ս. Զ.): 10. Ըրին ոտք, ոտից տակ քրիմ
 գիւ: 11. Պատեքաղմի մէջ: 12. Ոտքն արիւն
 կ'ըլլայ: 13. Արիւնէս կ'ըլլաս արիւնու: 14. Ոտ-
 քաման: 15. Քումաշ, տն. (կերպաս): 16. տն.
 փերէն, գէս: 17. Ուտեման: 18. Միանգամ:
 19. Եզ — միմալ: Այսինքն՝ եղակի, մէկ հա-
 տիկ, կամ միանալ (Ա. Զ.): 20. Ի մէնջ: Այս-

սինքն՝ մեղմէ (Ա. Զ.): 21. Այս տողը մութ
 է. Բէն Բ տառով սկսող բառի մը տեղ գրուած
 է, թերեւս բարբերէն բառ մը քահապ (հան-
 գիստ), կին առեր է՝ հանդիսոր կորսնցուցեր
 է (?) (Ա. Զ.): 22. Սլիք: 23. Պրակ. հեռու:
 Ինծի կը թուի որ տուրք քուր բառն է (Ա. Զ.):
 24. տն. բարխան: Ինձ (léopard) (Ա. Զ.):
 25. Աղի գետ: Այս տողը մութ է. թերեւս լայն
 կ'ուզէ՝ խօսքը աղի գետի մը վրայ չէ (?) (Ա.
 Զ.): 26. է: 27. Արիւն: 28. Երկիւ: 29. Ընէ.
 30. Տ. Մկրեան կ'ուզողապրէ՝ կ'ասէ, ճիշդն է՝
 կասէ (կասել, ...): 31. տն. կամուխ: 32. է
 բայը ալ կը հնչեն բոլոր Զուղայեցիք եւ Հընդ-
 կահայ եւ Պարսկահայ, եւ էք կը հնչեն միայն

ի, օր. *կ'ուտի, կ'ուտէի, տեսի ի, տեսել էի. եւն:* 33. Միատեղ գայ: 34. Պրս. հիւանդութիւն, ցաւ: 35. *Տ. Մկրեան գրած է կարէ', ուղիղն է կարէ (կրնայ) (Ա. 2.):* 36. Ձեմէ, ձեմեմ, երաւիքի նշանակէ ի գաւառս: *Տ. Մկրեան գրած է՝ ձեմա, ուղիղն է՝ ձեմա':* 37. *Տ. Մկրեան գրած է՝ ի՞նչ չարիւն, ուղիղն է՝ ի՞նչ չար ին (ինչ չար էին) (Ա. 2.):* 38. Հետ: 39. ինչպէս արիւն: 40. *Այսինքն՝* գայիր (Ա. 2.): 41. Կուտան, ինձ կը թուի թէ կը նշանակէ ցորենի դէզ. *ըստ իս՝ կը նշանակէ՝ ի՞նչ արդիւնք (Ա. 2.):* 42. 43. *Այսինքն՝ կ'ասէիր: Այսինքն՝ կ'ուտէի (Ա. 2.)* 44. *Կասել, կամենել (Ա. 2.):* 2արականը մին աչքէն ըլլայ, գրկուի: 45. *Ակն, տն. ճեմա՛հիր, իսկ սոյն տողի մէջ գնոջ քառն եթէ չէ կնոջ, թուի թէ նշանակէ թանկագին:* Գնոջ բառը հոս ստացուածպէս կը նշանակէ թանկագին եւ գերիս բառն ալ պէտք է ուղղել՝ գերուս (Ա. 2.): 46. Նա դուրսինն է, սա տունինն: 47. Արտելը: 48. տն. չայլար: 49. տն. պալթա: 50. Հորով, տն. Գուլու սուլու, գի գաւառաց մէջ հ կը հնչեն խ: 51. Ժամանակ: 52. Կայլորի: 53. Թուի թէ պարտի լինել ահուէ, գոր չկարացի գտանել թէ գինջ նշանակէ: 54. Կարգեմ կաղ պիտի լինի: 56. *Բնագիրն՝* բոս Մկրեանի՝ երբ կուտ չունիմ, ի՞նչ գայ աղայ (Ա. 2.): 56. *Բնագիրն՝* ըստ Մկր.ի՝ գաղայ. ուղիղն է՝ քաղայ, քաղէ (Ա. 2.): 57. Բարի կամեցող: 58. Բարեկամ: 59. Հաշիւ: 60. Երկ-

սայրի: 61. Հակ. տն. տէնկ: 2ուլու խակէն կը նշանակէ հասանորէն լաթերու (տն. չուլ) հակէն (Ա. 2.): 62. Զատէ՛ հասունը խակէն: 63. 2ուլիակ, ոստայնանկ: *Տ. Մկրեան գրած է՝ ջուլը խակէն, ուղիղն է՝ ջուլը խակէն, մէկ բառ, (ջուլիակէն):* 64. Շար (թիւ) է: *Տ. Մկրեան գրած է՝ շարայ, ուղիղն է՝ շար այ (Ա. 2.):* 65. Կամբիս: 66. *Տ. Մկրեան գրած է՝ մէկայ միս, ուղիղն է՝ մէկ այ (մէկ ալ) միս (Ա. 2.):* 67. Գեղիքին (սարր) տան: 68. Գեղն է: 69. Դուռ: 70. Այգին: 71. Գիւրիւն: 72. Էգ. 73. Միակեղ: 74. Թէ պիտի տայ: *Եթէ տայոց է, եթէ տայու է (Ա. 2.):* 75. *Անէ՛ հոս՝ ասնէի կամ ունենայի իմաստ ունի (Ա. 2.)* 76. *Տ. Մկրեան գրած է՝ դեզ, ուղիղն է՝ տեղ (Ա. 2.):* 77. Կապայի: 78. *Տ. Մկրեան գրած է՝ պոծայ (Ա. 2.):* 79. Կապայտ աչքէն: 80. Կնոցս: *Կողակցիս (Ա. 2.):* 81. Ինկուդին: 82. *Օ գիրն աւրէ՛, Ի գիրը չիւնէ՛ (Ա. 2.):* 83. Իւր: 84. Գործեր էի: 85. Սեւ: 86. Ածուխ: 87. Լափոս քաղաքի: 88. Ունեմի ծառ: 89. Բարակ պիտու է: *Տ. Մկրեան գրած է՝ ռաշիին, ուղիղն է՝ ռաշիին (Ա. 2.):* 90. Շինէ: 91. Դազադին: 92. Սա երկու տողը չիմացայ: 93. Զըլլաւոց: *Այսինքն՝ չըլլալիք (Ա. 2.):* 94. Տայր: *Այսինքն՝ հաց մը տար (Ա. 2.):* 95. Կը կլլէի: *Տ. Մկրեանի մեկնութիւնը սխալ է, աշուղը ըսել կ'ուզէ՛ Եթէ Աստուած ինձի շարաթը գոնէ մէկ հաց տար, ես այսպէս դառն ինչո՞ւ լայի (Ա. 2.):*